Հաստատված է՝
Տնօրեն՝ /Գ.Աբրահամյան /

Ստուգված է՝
Փոխտնօրեն՝ /Հ.Գասպարյան/

Ամիս ամսաթիվ
31.08.2022

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ
ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ /Շ. ԿԻՐԻՇՉՅԱՆ/

2022-2023 ՈՒՍ ՏԱՐՎԱ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Դաստիարակության տեսությունը որպես հասարակական երևույթ

Դաստիարակության գործընթացը դաստիարակողի և դաստիարակվողի փոխազդեցությունն է, որը չնայած իր բնույթով բազմազան է, բայց կարևոր հատկանիշ է:

Դաստիարակության բովանդակություն հասկացության հետ կապված կա 2 մոտեցում: Առաջինի ժամանակ առանձնացնում ենք տարբեր ուղղություններ՝ բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական, քաղաքացիական, էկոլոգիական: Սրանք ուղղված են անձնային որոշակի որակների և գծերի ձևավորմանը: Դաստիարակության գործընթացում անձնավորությունը դաստիարակվում է կոմպլեքսային համալիր ներգործության բոլոր ուղղություններով:

Մյուս մոտեցումը դիտարկում է արժեքային վերաբերմունքը, այսինքն՝ վերաբերմունք հայրենիքի, բնության, մարդկանց նկատմամբ, այսինքն՝ դա գոյության, կյանքի հիմնարար արժեք է: Գլխավոր արժեքը դա մարդն է և կյանքն իր բոլոր դրսևորումներով: Մարդասիրական տեսանկյունից դաստիարակությունը նպատակ է, միջոց հանդիսանալ չի կարող:

Դաստիարակության գործընթացի առանձնահատկությունը

Դաստիարակությունը դաստիարակողի և դաստիարակվողի նպատակաուղղված գործունեություն է, որի ընթացքում լուծվում են անձի զարգացման հիմնախնդիրները:

Առաջին առանձնահատկությունն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն են: Օբյեկտիվ գործոնն այն պայմաններն են, որոնց գործում ապրում է մարդը, իսկ սուբյեկտիվ գործոնը դաստիարակողի արվեստն է՝ մանկավարժական վարպետությունը:

2-րդ առանձնահատկություն՝ դաստիարակության արդյունքը միանգամից չի երևում: **3-րդ** առանձնահատկությունը դաստիարակության երկարատևությունն է: Այն երկար ու ձիգ տարիների ներգործություն է, դաստիարակի աշխատանքը և ինքնադաստիարակության արդյունք:

4-րդ առանձնահատկությունը դաստիարակության անընդհատությունն է: Այն նպատակասլաց, պլանավորող, անընդհատ ծավալվող գործունեություն է:

5-րդ՝ դաստիարակության գործընթացի համալիր կոմպլեքսային բնույթն է:

6-րդ առանձնահատկությունը դաստիարակության երկկողմային բնույթն է, այսինքն՝ ուսուցիչ և աշակերտ:

Դաստիարակության գործընթացի կառուցվածքը

Դաստիարակության գործընթացի կառուցվածքն ունի բարդ կառուցվածք և այն ենթադրում է դաստիարակության նպատակի առկայությամբ առաջադրված նպատակին հասնելու համապատասխան խնդիրների առաջադրում և լուծում:

Դաստիրակության բովանդակության, նրա բաղադրամասերի, դաստիարակության մեթոդների, հնարների, միջոցների ճիշտ ընտրություն, ենթադրվող արդյունքների վրա ազդող պայմանների առկայությունը: Դպրոցի պայմաններում դաստիարակության գործընթացը ուղղել անձի ամբողջական ձևավորմանը: Դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակության արժույթներին: Աշակերտների իմացական գործընթացի այնպիսի կազմակերպում, որն ապահովում է նրանց հասարակական գիտակցության զարգացումը:

Դաստիարակության սկզբունքները

Սկզբունքը հիմք է, ելակետ, կառավարող գաղափար, կանոն, դրույթ, նորմատիվ: Սկզբունքները օգնում են ուսուցչին բացահայտելու դաստիարակչական գործընթացի հատուկ հակասությունները, կողմնորոշվել ամենաբարդ իրավիճակներում և կապ տեսնել միջանկյալ և վերջնական վիճակների միջև:

1. Համալիր մոտեցում դաստիարակության նկատմամբ.
2. Մարդու մեջ դրականի վրա հենվելու դաստիարակության սկզբունք.
3. Հարգանք երեխայի անձի նկատմամբ սկզբունք.
4. Դպրոցականի տարիքային առանձնահատկության սկզբունք.
5. Սովորողի դաստիարակության անհատական հաշվառման սկզբունք.
6. Նպատակաուղղվածության սկզբունք.
7. Դաստիարակություն աշխատանքի մեջ.
8. Դաստիարակության կապը կյանքի հետ.
9. Կոմպլեքսային մոտեցում դաստիարակության նկատմամբ.
10. Գիտակցության և վարքի միասնության սկզբունք.
11. Անձի դաստիարակության կոլեկտիվում.
12. Հետևողականություն դաստիարակության ներգործության մեջ.
13. Դպրոցի, ընտանիքի պահանջների միասնություն:

Պարտադիր կրթության կենսագործում

հհ	Բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող
1.	Մասնակցել դասասենյակների կահավորմանը՝ պահպանելով սանիտարահիգենիկ նորմերի պահանջները	սեպտեմբեր	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն տնտեսվար, դասղեկներ
2.	Դպրոցի միջանցքներում ստեղծված սանիտարահիգենիկ անկյունների թարմացում	սեպտեմբեր	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն ԱԽ.
3.	Հետևել դպրոցի ներքին կարգապահությանը	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, բուժքույր, դասղեկներ, ԱԽ
4.	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով	սեպտեմբեր, տարվա ընթացքում	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն,սոց մանկավարժ, դասղեկներ
5.	Սահմանել հսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք.	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ
6.	Հետևել աշակերտների կողմից հագուստի կրման կանոնների պահպանմանը	տարվա ընթացքում	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն, ԱԽ

			դասղեկներ
7.	Հետևողական աշխատանքներ իրականացնել աշակերտների միջև առողջ միջանձնային փոխհարաբերությունների մթնոլորտ ստեղծելու գործում	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ ԼԻԴ
8.	Կազմակերպել աշակերտների դաստիարակչական, արտադասարանական , արտադպրոցական աշխատանքները՝ համագործակցելով դասղեկների հետ	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ ՇԻԴ
9.	Կազմակերպել աշակերտների հանգիստն ու ժամանցը	տարվա ընթացքում	ԴԱԿ, դասղեկներ ՇԻԴ
10.	Կազմակերպել ազգային մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, դասղեկներ ՇԻԴ
11.	Մասնակցել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի համագործակցության ապահովմանը	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, սոց. մանկավարժ, դասղեկներ
12.	<< Մեր գերազանցիկները>> ստենդի թարմացում, վերաձևավորում	հոկտեմբեր	ԴԱԿ ՇԻԴ
13	<<Մեր շնորհալիները>> ստենդի թարմացում	հոկտեմբեր-նոյեմբեր	ԴԱԿ ՇԻԴ
14.	Անհրաժեշտության դեպքում մասնակցել դպրոցի կարիքավոր երեխաների դաստիարակության և նրանց օգնություն ցուցաբերելու աշխատանքներին	տարվա ընթացքում	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, հոգեբան, սոց. մանկավարժ, դասղեկներ
15.	Ըստ անհրաժեշտության պատրաստ լինել հեռավար կրթության, նախապես համակարգել աշխատանքները	հոկտեմբեր	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն, օպերատոր, ուսուցիչներ

Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

հհ	Բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարող
1	Անցկացնել աշակերտական խորհրդի կազմի ընտրություն, հանձնախմբերի ձևավորում	հոկտեմբեր	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն
2	Անցկացնել աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն	***հոկտեմբեր***	ԴԱԿ, ՄԿԱԳ փոխտնօրեն
3	Անցկացնել աշակերտական խորհրդի ընդհանուր ժողովներ	***տարվա ընթացում***	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն
4.	Անցկացնել աշակերտական խորհրդի հանձնախմբերի առանձին նիստեր, ուղղորդել և համակարգել աշխատանքները, հետամուտ լինել դրանց իրականացմանը	***տարվա ընթացքում***	ԴԱԿ,ՄԿԱԳ փոխտնօրեն

Դասատիարակության կազմակերպում

1.ՈՒսումնադաստիարակչական աշխանքների կազմակերպում/**աշխատանքն իրականացվում է աշակերտական խորհրդի ուսումնադաստիարակչական հանձնախմբի աշակերտների աջակցությամբ**

հհ	Աշխատանքի բովանդակությունը/ աշխատանքները կազմակերպել սանիտարահիգենիկ նորմերը պահպանելով/	կատարման ժամկետը
1	Հետևել դասագրքերի և դպրոցական գույքի պահպանման և խնամքով օգտագործմանը	տարվա ընթացքում
2	Դասմիջոցային փոքրիկ միջացառումների միջոցով բարձրացնել աշակերտների հետաքրքրությունը	տարվա ընթացքում

	ուսման նկատմամբ	
3	Հետաքրքիր ու հաճելի անակնկալ ուսուցիչներին ուսուցչի օրվա կապակցությամբ:	հոկտեմբեր
4	Կազմակերպել ինտելեկտուալ մրցույթներ, վիկտորինաներ, բանավեճեր տարբեր դասարաններում	տարվա ընթացքում
5	Լուսանկարներով պաստառների պատրաստմանը մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական հանձնախմբի աշակերտներին՝ գերազանց առաջադիմությունը խրախուսելու նպատակով	հոկտեմբեր-նոյեմբեր
6	Համագործակցություն գրադարանավարի հետ / դասագրքերի խնամք/	տարվա ընթացքում
7	Կազմակերպել դպրոցում ինքնակառավարման օր՝ դրանով աշակերտներին ընձեռել հնարավորություն ուսուցչի դերում լինելու և ոմանց օգնելու մասնագիտական կողմնորոշման հարցում	մայիս

2.Գեղագիտական դաստիարակություն /աշխատանքն իրագործվում է աշակերտական խորհրդի մշակութային հանձնախմբի աշակերտների աջակցությամբ/

Սա համաշխարհային մանկավարժական գրականության մեջ դիտվում է որպես մարդու հարմոնիկ զարգացման կարևոր բաղադրամասը: Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր կուլտուրայով զբաղվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն էլեմենտներից մեկն է: Գեղագիտական դաստիարակության առարկաներն ունեն ընդհանուր զգացողական նշանակություն և օգնում են մյուս առարկաների տիրապետման գործում: Գեղագիտական դաստիարակությունը սովորողների և մանկավարժների համատեղ գործունեության պրոցես է դպրոցականների էսթետիկական կուլտուրան ձևավորելու ուղղությամբ: Գեղագիտական կուլտուրան իր մեջ ներառում է զգացմունքների, գիտակցության, վարքագծի և գործունեության որոշակի աստիճան:

Արվեստի մեջ այն կապված է արվեստի ստեղծագործական և կյանքի երևույթների էսթետիկական ընկալման հետ: Գեղագիտական դաստիարակություն նշանակում է անցյալի կուլտուրական ժառանգականության տիրապետում և ճիշտ վերաբերմունք դեպի ժամանակակից արվեստը: Գեղագիտական դաստիարակություն նշանակում է պահանջ և ունակություն կյանքը կառուցել գեղեցիկ օրենքներին համապատասխան հաստատել գեղեցիկ հարաբերություններ մարդկանց միջև և աշխատանքում

հհ	Աշխատանքի բովանդակությունը/ աշխատանքները կազմակերպել սանիտարահիգենիկ նորմերը պահպանելով/	կատարման ժամկետը
1	Կատարել դպրոցի աշակերտական անկյան շարունակական աշխատանքներ՝ նվիրված տարբեր տոներին և հիշատակի օրերին:	*տարվա ընթացքում*
2	Դասմիջոցային փոքրիկ միջացառումների միջոցով շնորհավորել կարևոր իրադարձությունները, պետական տոները	*տարվա ընթացքում*
3	Տոնական օրերին դպրոցում ստեղծել համապատասխան միջավայր	*տարվա ընթացքում*
4	Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի պատմամշակութային վայրեր՝ պահպանելով սանիտարահիգենիկ կանոնները:	*տարվա ընթացքում*
5	<Մեր շնորհալիները> ստենդի թարմացում, վերաձևավորում	*հոկտեմբեր-նոյեմբեր*

3.Աշխատանքային դաստիարակություն /**իրագործվում է աշակերտական խորհրդի կարգապահական և տեղեկատվական հանձնախմբերի աշակերտների աջակցությամբ**

հհ	Աշխատանքի բովանդակությունը /աշխատանքները կազմակերպել սանիտարահիգենիկ նորմերը պահպանելով/	կատարման ժամկետը
1	Կազմակերպել շաբաթօրյակներ դպրոցի հարակից տարածքներում և դպրոցին կցված համայնքային նշանակության տարածքներում	*տարվա ընթացքում*
2	Ծառատունկի և կանաչապատման աշխատանքների կազմակերպում	*մարտ-մայիս*
3	Տարբեր մջոցառումների և այցելությունների ժամանակ կարգապահության բարձրացմանն ուղղված կազմակերպչական աշխատանքներ	*տարվա ընթացքում*
4	Տեղեկատվության ապահովում աշակերտների շրջանում	*տարվա ընթացքում*
5	Դասմիջոցային փոքրիկ միջացառումների միջոցով բարձրացնել կարգապահությունը դպրոցում	*տարվա ընթացքում*
6	Հետևել դպրոցում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը	*տարվա ընթացքում*

4.Ռազմահայրենասիրական դաստիարակություն /իրագործվում է աշակերտական խորհրդի ռազմամարզական հանձնախմբի աշակերտների աջակցությամբ/

հհ	Աշխատանքի բովանդակությունը /աշխատանքները կազմակերպել	կատարման ժամկետը

	սանիտարահիգենիկ նորմերը պահպանելով/	
1.	44օրյա պատերազմում զոհված դպրոցի շրջանավարտների հիշատակի անկյան մշտական խնամք	տարվա ընթացքում
2.	Տարբեր միջոցառումներ նվիրված ՀՀ և ԱՀ տոնական և հոբելյանական տոներին	տարվա ընթացքում
3.	Սպաների և ուսուցիչների համատեղ ուժերով կազմակերպել արիության դասեր, հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի , արցախյան ազատամարտի, քառօրյա պատերազմի, 44օրյա պատերազմի իրական մասնակիցների, ՀՀ ԶՈՒ –ում ծառայության մեջ աչքի ընկած զինծառայողների հետ:	տարվա ընթացքում
4.	Այցելություն զորամասեր, ծանոթություն զորամասի առօրյային և բանակային կյանքին	տարվա ընթացքում
5.	Հրաձգության պարապմունքների իրագործում, փոխհամագործակցելով տարածաշրջանի զորամասերի հետ	տարվա ընթացքում

Ուսումնական տարվա ընթացքում պլանավորված միջոցառումներ

հհ	Աշխատանքի բովանդակությունը /աշխատանքները կազմակերպել սանիտարահիգենիկ նորմերը	կատարման ժամկետը

	պահպանելով/	
1	Բարի գալուստ դպրոց	սեպտեմբերի 14
2	ՀՀ անկախության հռչակման օր	սեպտեմբեր
3	Ուսուցչի օր	հոկտեմբեր
4	Ամանոր և Սուրբ ծնունդ	դեկտեմբեր-հունվար
5	Միջոցառում նվիրված Հայոց բանակի կազմավորմանը	հունվար
6	Կանանց միջազգային օր	մարտ
7	Մայրության և գեղեցկության օր	ապրիլ
8	Զատկի տոնակատարություն	ապրիլ
9	Հաղթանակի օր	մայիս
10	Աշակերտական խորհրդի կատարած աշխատանքների հաշվետվություն	մայիս